



ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՐԱԹԱԹԵՐ

Հեղափոխությունը մի՛շտ չարիք է

Համաշխարհային դասնությունից ինձ հայցնի չէ որեւէ հեղափոխություն, որը դժբախտություն չի բերել սկյալ երկրին ու ժողովրդին, անկախ այն բանից, թե այդ հեղափոխությունը ներքին դրդադասճառներից, թե՞ արտաքին հրահրմամբ, ուղղորդմամբ կամ կազմակերպմամբ է սեղի ունեցել, եւ կամ՝ այդ բոլորի համատեղման հետեւանով:

Այս հաստատումը բնավ դայմանավորված չէ ռամկավար-ազատական իմ ըմբռնումներով, որոնք միշտ կողմ են էվոյուցիային (արեւմտահայերը դիտարկում են հեղափոխությունը) եւ դեմ՝ հեղափոխությանը:

Իսկապէս չեն հիշում որեւէ հեղափոխություն, որի հետեւանով իշխանության եկածները չեն դիմել բռնաճնշումների ընդդէմ նախնիների, նույնիսկ՝ անկողնակալ դիրքորոշում ունեցողներին: Հալածանք, բանտարկություն, իրավազրկում, ունեզրկում, երկրից ախոր, ֆիզիկական հաշտեհարդար եւայլն: Եվ այդ բոլորը՝ «օրենքով», մեկ-մեկ՝ «դասաւարար», բայց միշտ՝ նախադաս փոփոխված օրենսդրությամբ:

Կարիք չկա բացելու եւ որդեկելու համաշխարհային դասնության դասազրէրը, համացանցը, թերթելու ֆրանսիական, ռուսական, ամերիկյան, հարավամերիկյան եւ հեղափոխություն արդած ու տակալին արդող այլ երկրներում դասաւարար ու դեռ դասաւարար իրադարձությունների մասին վկայությունները: Նման վերաբերման եւ ներքին փոխաբերման բավական է մտաբերել գեթ վերջին տասնամյակներում մեր տարածաշրջանում, մերձակայքում ու հարեւանությամբ դասաւարարները՝ Իրաքից, Լիբիայից, Սիրիայից մինչեւ Վրաստան, գոնավորներից մինչեւ «արաբական», «գարնամային», «վարդային», «մեհաբեր» ու «թաւր» հեղափոխությունները: Մանավանդ վերջիններս, որի ընթացքում, մեր բոլորի աչիք առաջ, սկզբում ընդամենը «դոկտրինայի» համարվող հեղափոխականը, ապա վարչապետից բռնապետի վերածվելու ճանադարին ինչեւի բերեց մեր երկրի, մեր Արցախի, մեր ժողովրդի, համայն հայության գլխին՝ դաստիարակ, զոհեր, հաշտանդամներ, տարածքների ու դիրքերի կորուստ, միլիոնացում, աղքատացում, աղքատի անորոշություն եւ հայկական հիվանդություններից ամենավատագրի՝ արտագաղթի բորբոքում:

Հիշենք թաւրից դողողաւի ու չազուշի «ժողովրդավարությամբ» անցած այդ տղայի առաջին երկու նախաձեռնությունները: Առաջինը՝ Սահմանադրական դատարանի քանդում եւ հղատակեցում, երկրորդը՝ Հայ եկեղեցու ու եկեղեցականների դէմ հալածանք: Առաջինը՝ օրենքի եւ օրինականության սեփական ըմբռնումը դատարանի եւ համար, ինչպէս որ «օրենքով» գողներն են անում իրենց գողությունները հարգելի դարձնելու համար, երկրորդը՝ «ինձից բացի չի հեղինակություն, հակասող կարծիք ու տեսակէտ» բանաձեւը դատարանի, ժողովրդային խոսուքով՝ ստղացնելու մղատակով:

Կարիք չկա մեկ առ մեկ, թեկուզ մասամբ թվարկելու վերջին 7-8 տարիներին մեր երկրում արձանագրված հակաօրինականությունների, հակամարդկային, հակազգային ու հակադատական արարքները, բռնադատությունները, ժողովրդական երկարաձգվող կալանքները: Դրանց մասին խոսում եւ գում են ոչ միայն մեր, այլեւ միջազգային լրատվամիջոցները, միջազգային բարձր հեղինակությունները, ինչպէս՝ **Ռոբերտ Ամստերդամը, Ջոել Վեյկամորը, Ալիսոն Հոլմերը**, նույնիսկ նախագահ Թրամփի որդին՝ **Դոնալդ Կրստերը**, անգամ՝ Բելոռուսի բռնապետը՝ **Լուկա Շենկոն**, որը չարախիճը ծաղրում է մեզ, զգուշացնում մեր դատության կործանման մասին: Բռնաճիւղական որեւէ երկիր չեն հիշում, որ, օրինակ, հարց տալու, հարցադրում կատարելու համար բանտ տանում լրագրողի կամ բլոգերի...

Կարծում եւ առաջարկում են, որ ՀՀ Սահմանադրությունը դեռ է ունենա երկու հավելվածներ. առաջինը՝ Հայաստան դատության տարածումը հեղափոխությունն ու հեղափոխականությունը բացարձակապէս արգելելու, իսկ երկրորդը՝ այսուհետեւ դատական բարձրագույն դատարանների հավակնող թեկնածուների մտաւոր, հոգեկան, գեներիկ այլ հիվանդությունների առկայությունը բացառող բժշկական հասուկ հանձնաժողովի եզրակացության հրադարակումը օրինականացնող:

Հեղափոխությունները, նույնիսկ ֆրանսիական Մեծ հեղափոխությունից, որը բաղախական-սոցիալական, ինչպէս նաեւ արվեստների ու գիտության աստղաբեկում այնքան կարեւոր արժեքների ծնունդ է սկել, անցումային երկար ժամանակ է դաւանաւել օրենքի իշխանության, հասարակության եւ անհատի կենսական ազատությունների հասնելու եւ կարգուկանոն հաստատելու համար:

Մեզ դեռ չեն նման փորձանքներն ու փորձությունները: Հեղափոխությունը չարիք է: Հեղափոխականները՝ նույնպէս:

ՏԱՊԻՐ ԱՐԵՏԵՐՅԱՆ

Euronews-ը «Հեղափոխութեամբ» պարտակելու է Ալիեւի ոճրագործության հետքերը

Միջազգային կազմակերպություններին վարելու դայմաններում նույնների 18-ին Բախում բացվել է «Եվրոնյուզ» նոր գրասենյակը, որի ներկայացուցիչն ընդգծել է՝ սա համագործակցության ամրադրում է նշանակում: Գրասենյակի հիմնումը հնարավոր է դարձել Ադրբեյջանի գործում ջանքով: 20 լեզվով, ամսական ավելի քան 145 միլիոն ակնդիր, հետեւող ունեցող հիշյալ մեդիաարքակը, ըստ ներկայացուցչի, չեզոք, անկախ է, տեղեկատվությունը՝ փաստահետ, իսկ իրենց մղատակը՝ ճշմարտությունը ցույց տալը: «Արդի աշխարհում, երբ մեդիան հակված է կողմնադատության, համարյա բանավեճը բեւեռացված է, չեզոքությունը որակյալ լրագրության բանալին է: Հասերը հակամարտություն են բորբոքում, մեր հեռուստատիւնը սատարել է խաղաղության նախաձեռնություններին, մղատել երկխոսությամբ՝ անդրադարձել Ալիեւի, Փաշինյանի հայտարարություններին»:

ԱՆԱՏԻՏ ՏՈՒՄԵՐՅԱՆ


Ո՛չ ընդդիմությունն է «արքայական կով», ո՛չ իշխանությունը

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մի թունդ բանավեճ տեսա, որն այն թեզի տակ էր, թե ով քննադատում է ընդդիմությանը՝ ջուր է լցնում իշխանության ջրաղացին: Թեզի հեղինակը լուրջ համարվող մարդ էր, ավելին՝ լրատվական քաղաքականություն իրականացնողներից մեկը, եւ այս դիմադրական ինձ ավելի թաւրեցեց՝ մտածել տալով, թե քանի մեր մտածող ժողովուրդներ իրականությունը չեն տարբերել դատարանականությունից, Հայաստանն այս վիճակից դուրս չի գալու, միգուցե էլ ավելի է խրվելու:

Այսպէս մտածողներին ուզում ես հարցնել՝ լուրջ եմ ասում. ո՛չ ընդդիմությունն է «արքայական կով», ո՛չ իշխանությունը, որ չքննադատենք-երկրորդանք: Ավելին՝ ընդդիմությանն էլ, իշխանությանն էլ վարձում է հանրությունն իր գրդանից, որը կարող է եւ քննադատել, եւ դատաւել, եւ գրդի ծոցն ուղարկել երկուսին էլ: Որքան էլ իրենք իրար մեջ տան-առնեն, իրենց հայրենասեր ու ազգասեր սեղերն, ընդդիմություն կամ իշխանություն լինելու միակ կադույսարյունավոր համարեն: Բա թե՛ միայն իրենք իրավունք ունեն իշխանություն կամ ընդդիմություն լինելու, մինչդեռ սկզբունքորեն գոնե այդ հարցը դեռ է որ լուծի հանրությունը՝ ընտրությամբ: Եթե առկա ընդդիմության այս ու այն հասկանքներն այլեւս եւ վաղուց անունակ են ազդեցություն ունենալ հանրության վրա, համակրանք չաւել, ավելին՝ հանրության հակակրանքին են արժանանում, ինչո՞ւ են դաշնը քաւում իրենց վրա, ո՞վ է նրանց ընդդիմություն նշանակել, ինչո՞ւ են տեղ գրավում եւ գործունեության դատարան ստեղծում: Ի՞նչ դեռ է անի հանրության լրջմիտ հասկանքը, եթե չքննադատի այդ կարգի ընդդիմությանը:

Էլ չասած, որ Հայաստանում տասնամյակներով եւ հիմա էլ այնպէս չի եղել եւ չէ՛, որ ընտրություններով են իշխանության փոփոխության հարց լուծում. ընտրությունների ելքերը, ինչպէս եւ առաջ, հիմա էլ որոշվում են



այլ տեղերում՝ տեղականից մինչեւ աշխարհադատական բազմաբնով, քանի որ սովորաբար տեղական իշխողներից են կախված աշխարհադատական ծագրերի իրականացումները:

Դիցուք՝ անցած կիրակի Վաղարշապատի ավագանու ընտրությունների արդյունքները ընդդիմություն-իշխանություն մրցակցության սխեմայով միայն դայմանավորողներին ասեմ, որ տեխնիկական, տեխնոլոգիական հմարները, որոնցով ընդդիմությունը բացատրում է իշխանության հարաբերական հաղթանակը, տասներորդական են կամ ուղղակի հենց մաս են սխեմայի (էն որ ասում են՝ խոյ համայնքը միավորեցին Վաղարշապատ համայնքի հետ, համայնքի ԺՊ էլ նշանակվեց խոյի համայնքապետ **Արգիշի Մեխակյանը**, որը դեռ է համայնքապետ դառնա ըստ վերջին ընտրությունների արդյունքների, կամ որ ասում են՝ վարչական ռեսուրսի կիրառում, ասֆալտ-մասֆալտ): Այդ բոլորը լինելու էր եւ եղել է՝ ով էլ իշխանության լինեւ, ընտրությամբ Հայաստանում երբեք հմարավոր չէ այլ ելք (մեկ-մեկը հաստատում է օրինաւարությունը), անկախ անձերից: Այլ տեղ փնտրեմք դատաւել, ու ոչ թե աղոկալիդսիսը կամ կյանքն ընտրելու փաշինյանական բացատրությունը հալած յուրի տեղ ընդունեմ:

⇒3

Դիմող կառչենք միջազգային իրավունքից

Հրապարակվել է «Արցախի շրջափակումն ու բնակչության բռնի տեղահանումը» վերնագրյալ փաստաւարակաւ գեկույցը

Նույնների 19-ին «Անի» հյուրանոցում «Սիվիլ Նեթի» հրավիրած «Արցախի տեղահանումից հետո. մարտահրավերներ եւ լուծումներ» խորագրով քննարկմանը նախ առիթ տղալ ծախոթանալու կարեւոր մի արձանագրության՝ «Արցախի ժողովականում ու բնակչության բռնի տեղահանումը» վերնագրյալ փաստաւարակաւ գեկույցի սեղմագրին, որ 2025-ին դատարան է Միջազգային եւ համեմատական իրավունքի կենտրոնը՝ Մարդու իրավունքների եւ արդարադատության հայկական իրավական կենտրոնի աջակցությամբ: Սեղմագրում ներառված են ամբողջական գեկույցի ներածությունն ու մեթոդաբանությունը, եզրահանգումներն ու իրավական գնահատականները, իսկ ամբողջական գեկույցում (որին կարելի է ծանոթանալ առցանց, նաեւ հեռագրության բուն արդյունքները՝ մարդկանց հետ իրականացված հարցազրույցներից հարյուրավոր մեջբերումներ եւ բացահայտված փաստեր: «2022-ի դեկտեմ-

բերից սկիզբ առած Արցախի ժողովականում եւ բնակչության բռնի տեղահանումը 2023-ի սեղմեմբերին, ներկայացնում են հայության դեմ իրականացված համակարգային ճնշման եւ եթնիկ զտման նոր փուլ: Զեկույցը փաստագրում է այդ գործընթացները՝ մարդկային դատարանների միջոցով, վեր հանում բռնությունների եւ մարդկային արժանադատության դեմ ուղղված հարյուրավոր դեմքեր եւ անվտանգության ճգնաժամի դրսեւորումներ՝ տալով դրանց իրավական գնահատականը՝ մարդու իրավունքների եւ միջազգային մարդասիրական իրավունքի ժողովականներում», գրված է գեկույցի ներածության մեջ: «**Ազգի**» սուղ տարածում չենք կարող լաւ ծաւալվել, բայց հատուկ կարեւորելով սույն մասնագիտական աշխատանքը, հաշիւ առնելով այն փաստը, որ մեր թերթը կարդում են նաեւ Հայաստանից դուրս, ներկայացնեմք գեկույցը՝ վերնագրերով ծանուցելով:

⇒3

ԱՐԾԿԻ
ԲԱՆՉԻՆՅԱՆ

Անցյալ տարի նոյեմբերի 8-ին Բեռլինում երկարատև հիվանդությունից հետո 80 տարեկանում մահացել է 1960-ականների վերջի, 70-ականների սկզբի համաշխարհային փոփ երաժշտության աստղ Ռիֆի Շեյնը: Շեյնի կատարած ամենահայտնի երգը՝ «Մամի բլյուն», 1970-ականներին երգում էր ողջ աշխարհը, այն հնչում էր անգամ աշխարհից կտրված խորհրդային Հայաստանի հեռավոր գյուղերում...

Եվ ո՛չ այն ժամանակ, ո՛չ հիմա հայերը չգիտեն, որ Ռիֆի Շեյնն ունեցել է հայուհի «մամի», որը նույնպես ժամանակին եղել է ճանաչված մեկը Եգիպտոսում՝ նկարչուհի **Հասմիկ Պալլարյան-Յասմին Թաթեթը**:

Այս փաստը բացակայում է Ռիֆի Շեյնի մասին համացանցային աղբյուրներում (անգլերեն Վիքիդեյթիան Ռիֆի Շեյնի մոդը, առանց անունը տալու, համարում է ֆրանսուհի), մինչդեռ ժամանակի մամուլում բազմիցս գրվել է այդ մասին...

Շեյնի մահվան տարեիցի առթիվ ավելորդ չեմք համարում անդրադառնալ այդ գրեթե մոռացված արվեստագետ մայր եւ որդու գործունեությանը:

Մայրը

Խառնաշխարհ, կաղերամահ աչքերով, մրբին եւ հմայիչ Հասմիկ Պալլարյանը ծնվել է 1922-ին, Ալեքսանդրիայում (այլ սկզբում՝ Վիեննայում): Եգիպտահայ նկարիչ **Ասոս Զորյանի** զարմուհին եւ առաջին տղան էր: Տակավին 12 տարեկանում Ալեքսանդրիայի «Գրեգուար» ցուցասրահում կայացել է նրա անհատական ցուցահանդեսը: Հաստատվելով Կահիրեում՝ Հասմիկը հետեւել է Լեոնարդո դա Վինչիի անվան գեղարվեստական դպրոցի նկարչական դասերին: 1943-ից դարձավ մասնակցել է Կահիրեի Կամանգ ակումբի Նկարչուհիների եւ Բանախակազմի անդամների տարեկան ցուցահանդեսներին: 1943-ին ամուսնացել է լիբանանցի նավթագործ **Ալբեր Թաթեթի** հետ եւ այդուհետ գրվել ժամանի Թաթեթ, իսկ արաբական շրջանակներում ճանաչվել որպես Յասմին: Սկզբնապես հիմնականում նկարել է մայրերի դիմանկարներ, ապա՝ արաբական դիմանկարներ, դառնալով եգիպտական արաբական ցուցահանդեսների ճանաչվել որպես Յասմին: Սկզբնապես հիմնականում նկարել է մայրերի դիմանկարներ, ապա՝ արաբական դիմանկարներ, դառնալով եգիպտական արաբական ցուցահանդեսների ճանաչվել որպես Յասմին:


Նշենք, որ Պալլարյանի մասին եգիպտահայ մամուլի մասնագիտությունը կարելի է գտնել **Հայկ Ավագյանի** առաջատար «Նիթեր եգիպտահայ նկարչության եւ Բանախակազմի մասին» (մինչեւ 1970 թվական) հատրում (Գահիրե, 2023, էջ 169-176):

Որդին

«Կան շատ երաժիշտներ՝ թե՛ տղամարդ, թե՛ կին, որոնք նույնիսկ տարբերություն չեն տեսնում վարունգի եւ միկրոֆոնի միջեւ»:

Ռիֆի Շեյն

Բարձրաստիճան, բարեկազմ, համակրելի դիմագծերով, կանաչ աչքերով, գանգրահեր, 1960-70-ական թթ. արեւմտյան երիտասարդության համար գե-



ղեկության եւ սեռազգայնության խորհրդանիշ Ռիֆի Շեյնի լուսանկարը հաճախ է երևացել արեւմտյան մամուլի շաղկերից եւ հեռուստատեսության, նա մենահամերգներով ելավ ելույթ ունենալով...

Իսկական անունով Ժորժ (Ջոր) Ալբեր Թաթեթ՝ Շեյնը ծնվել է 1944-ին, Կահիրեում: Երգել է մանկուց՝ մոր սովորեցրած երգերը, իսկ 11 տարեկանից կիթառ է նվագել: 15 տարեկանում մեկնել է Լիբանան, երգով ու կիթառ նվագելով հանդես եկել ակումբներում: Այդ մոր հետ տեղափոխվել է մայր Փարիզ՝ երաժշտություն ուսանելու, այնուհետ՝ Իսախան՝ բրիտանական փոփ երաժշտության ներխուժման ալիքի հետեւանով: Այստեղ նրան վիճակվել է դառնալ մոր աստղերից իջած բիթ երաժշտության աստղ: Նրան հայտնաբերել են երաժշտական արտադրիչներ **Սերժո Բարդոսին** եւ **Ալբերիգո Կոչեսսան** եւ դառնալով Բարդոսինի ղեկավարում տեղափոխվել է Փարիզ: Նրա հետագա ճակատագիրը եւ մահվան թվականը մեզ անհայտ են:

Նշենք, որ Պալլարյանի մասին եգիպտահայ մամուլի մասնագիտությունը կարելի է գտնել **Հայկ Ավագյանի** առաջատար «Նիթեր եգիպտահայ նկարչության եւ Բանախակազմի մասին» (մինչեւ 1970 թվական) հատրում (Գահիրե, 2023, էջ 169-176):

Այս երգի հաջողությունից օգտվելով՝ Շեյնը եւ իր հեղինակները դարձան մոդերից մեքենայի երգեր՝ «Vi saluto amici Mods» («Ցեսություն, մոդ ընկերներ»), որի թեման գլխավոր հերոսի՝ Լիվերպուլից հեռանալն էր: Երգը կառուցված էր դանդաղ ռիթմով եւ դասական գործիքավորմամբ՝ ուղեկցված խոսքերով, ջութակների եւ թմբուկների հնչյուններով, սակայն այն չունեցավ մայրորդի հաջողությունը:

Այնուհետեւ Շեյնը հեռացել է բիթ ուղղությունից եւ 1966-ից ձայնագրել է այլ հայտնի արտիստների (**Էլվիս Փրեսլի, Թոմ Ջոնս**) ստեղծագործությունների փակր տարբերակներ: 1967-ին տեղափոխվելով Գերմանիա՝ նա իսպաներեն փոխարինել է գերմաներենով, ձայնագրել «Ես կկրեմ բոլոր շոթերները» սինգլը, որը դարձել է համազգային հիթ, «Աշխարհը դեռ նման բան չի տեսել», «Խնդրամիտ կրթնա թագավոր» եւ «Ես խոսում եմ խոսքի չեմ ասում» սինգլները: Արժանացել է «Օսո Զինգեր» բարձրագույն մրցանակի, որը գերմանական երգի «Օսթարն» է:

1967-ին Ռիֆի Շեյնը հռոմում ծանր ավտոկործանում է ենթարկվել: Լրագրողները գրել են, որ բարեբախտաբար Ռիֆին երկրորդ **Ջեյմս Դին** չի դարձել, եւ փրկվել է աղանդավոր երիտասարդի կյանքը: Նա հիվանդանոցում բուժվելիս հարյուրավոր մամակներ է ստացել ողջ Եվրոպայից, Հարավային Ամերիկայից եւ անգամ Կուբայից: Որոշ ընդմիջումից հետո երգիչը 1969-ին Գերմանիայի հեռատեսիլով ներկայացրել է «Ռիֆի Շեյն շոուն», 1970-ին Լյուսեմբուրգում կայացած հիթ-փառերում գրավել է առաջին տեղը՝ արժանանալով «Ոսկե աշյուծ» մրցանակին: Սակայն մեծագույն հաջողությունը դեռ առջեւում էր: 1971 թվականին Շեյնը թողարկեց «Mamy Blue» երգի գերմաներեն տարբերակը: Երգի խոսքերը եւ երաժշտությունը 1970 թվականին ստեղծել էր ֆրանսիացի կոմպոզիտոր եւ երգահան **Յուլիան Ժիրոն**, որը մայր կատարել էին ֆրանսերեն, ապա երգը դարձավ միջազգային հիթ՝ շնորհիվ տարբեր կատարումների,

այդ թվում՝ իսրայելական «Փոփ թոփ» խմբի (անգլերեն) եւ Ռիֆի Շեյնի (գերմաներեն): Այս երգի ձայնագրությունը մեկ շաբաթում վաճառվել է կես միլիոն օրինակով, հասել Գերմանիայի ազգային հիթ-փառերի 7-րդ հորիզոնականին, իսկ երգի անգլերեն տարբերակը ֆրանսիայում գրավել է 8-րդ տեղը, մեկ առաջին տասնյակի մեջ ֆրանսախոս Բելգիայում եւ ճապոնիայում, իսկ Արգենտինայում ու Բրազիլիայում գրավել է առաջին տեղը:

Որպես դերասան՝ Շեյնը հիմնականում նկարահանվել է իսրայելական եւ գերմանական երաժշտական ֆիլմերում, այդ թվում՝ **Էնո Զադանի** «Ամենաբարձր ճնշումը» (1965), «Տասնվեցամյա եւ չկահեր» (1966), Մարիանո Լաուրենտիի «Ոսկեգոծ աղջիկը» (1967) եւ «Դեղին դրոշմի տղաները», **Կուրս Վիլհելմի** «Օլիմպիա, Օլիմպիա» (1971), **Հարալդ Ֆիլիպի** «Ուռնա», մեմ Լրկին ամուսիններ» (1971), գերմանական «Դերի» հեռուստատեսային «Կալկաթա» դրվագում (1976) եւ այլն: 1971-ին Բեյրութում դառնալով եւ մի ֆոտոլեյք՝ գերմանական «Բավլ» շաբաթահանդեսի համար, իսկ նույն թվականի վերջին Շեյնին ԱՄՆ է հրավիրել նշանավոր երգիչ **Ռեյ Չարլզը**՝ համագործակցելու, ինչպես նաեւ **Դին Մարթինի** հետ համատեղ ելույթ ունենալու վերջինիս հեռուստատեսությունում:

1975-ին հաստատվելով ԱՄՆ-ում՝ արեւմտյան երիտասարդության երբեմնի կուռքը զբաղվել է գործարարությամբ, սակայն երբեմն վերադարձել է Գերմանիա՝ գործնական մախաճեղքությունների եւ մոսալիզմական համերգների համար: 1989 թվականին նա մի փոքր վերադարձ է նշել՝ գերմանացի նշանավոր երգիչ **Դիթեր Բոլենի** հետ ձայնագրելով «Մի անգամ ես կմնամ հավիտյան» երգը ZDF հեռուստատեսային «Մրցակիցները մրցույթում» սերիալի համար: Այդ սաունդթեյքը դարձել է գերմանական հեռուստատեսային համար երբեմն ստեղծված ամենահաջող ձայնակավառակը:

1984 թվականին Շեյնը կնոջ՝ Ջիմայի հետ Դյուսելդորֆում բացել է խանութ՝ վաճառելով իրենց իսկ ձեւավորած հագուստները: Ավելի ուշ նա Դյուսելդորֆի Ֆիլմգեմ թաղամասում կրթակ է ունեցել, որը, սակայն, 2010-ին՝ մեկուկես տարի անց փակել է: Որպես հոբբի՝ Շեյնը գծանկարներ է արել, 2009-ին Դյուսելդորֆում ներկայացրել է իր գծանկարների ցուցահանդեսը: 2012 թվականին նա հանդես է եկել փողոցային երաժիշտի փոքր դերով «Եվ դու հեռացար» հեռուստաֆիլմում:

ԱՆՈՒՇ
ԱՍԼԻԲԵԿՅԱՆ


Արվեստագիտության թեկնածու

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի եւ «Համազգային» հայ կրթական եւ մշակութային միության համագործակցությամբ 2025 թ. հոկտեմբերի 10-ին տեղի ունեցավ Ռազմիկ Դավոյանի 85-ամյակին նվիրված գիտաժողով:

Գիտաժողովի բացման եւ ողջույնի խոսքով ելույթ ունեցան ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան **Արշալույս Գալստյանը**, «Համազգային» հայ կրթական եւ մշակութային միության կենտրոնական վարչության անդամ **Արսաես Շահբազյանը**, «Համազգային» հայ կրթական եւ մշակութային միության Հայաստանի գրասենյակի Տնօրեն **Ռուզան Առաքելյանը** եւ բանաստեղծի կինը՝ **Լուսինեի** համալսարանի լեզվաբանության դոկտոր **Արմինե Թամրազյան-Դավոյանը**: Վերջինս իր բացման խոսքում անդրադարձավ Ռ. Դավոյանի արժանատիքներին, հրաշարա-

կություններին, ելույթներին եւ հարցազրույցներին: Բազմաթիվ օտար զրոյների եւ գրականագետների գրախոսականներից մեջբերումներ անելով՝ նա շեշտեց, որ բանաստեղծն այն բացառիկ զրոյներից է, որն էական ձեռքբերումներ է ունեցել թե՛ հորհրդային Միության շարաժում, թե՛ արեւմտյան աշխարհում:

Մեծանուն բանաստեղծին նվիրված անդրանիկ գիտաժողովի ընթացքում ներկայացված գեկուցումները նորովի բացահայտեցին Ռազմիկ Դավոյանի ծավալուն եւ արժեքավոր գրական ժառանգության շարաքնույթ ճյուղերը՝ լեզվաբանական, գրականագիտական եւ արվեստաբանական ճեղքային: Ձեկուցումներով հանդես եկան Պրոֆեսորներ **Դավիթ Գասպարյանը**, **Սուրեն Աբահանյանը**, **Սուրբա Խանյանը**, **Արս Գալստյանը**, **Հենրիետա Սուխասյանը**, դոցենտներ **Կարինե Մարտիրոսյանը**, **Անուշ Ասիբեկյանը**, **Զնաբիկ Աբահանյանը**, **Արգաշ Ափինյանը**, բանասի-



ական գիտությունների թեկնածու **Լուսինե Ղանոյանը**, արվեստագիտության թեկնածու **Լիլիթ Արսենյանը** եւ մագիստր **Գոհար Օհանջանյանը**: Գիտաժողովը բացառիկ էր նաեւ նրանով, որ ի թիվս կազմակերպիչ հաստատությունների, համախմբել էր նաեւ Խ.Ա. Բովանի անվան Պետական մանկավարժական եւ Երեւանի Մխիթար Հերացու անվան

Պետական բժշկական համալսարանների ներկայացուցիչների, ՀՀ ԳԱԱ Գրականության, Լեզվի եւ Արվեստի ինստիտուտների: Եթե զրոյի ստեղծագործությանն անդրադառնալիս բնական են բանասիրական եւ գրականագիտական վերլուծությունները, ապա անադատելի եւ նոր շեշտեր բացահայտեցին մասնավորապես ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտախոսները՝ արվեստագիտության թեկնածուներ Անուշ Ասիբեկյանը եւ Լիլիթ Արսենյանը: Ասիբեկյանն անդրադարձավ Դավոյանի եզակի դրամատիկական ստեղծագործությանը՝ «Բեմ բեմի վրա» թատերադրական սկզբունքի կիրառումը Ռազմիկ Դավոյանի «Ռեքս են մնացյալ դերասանները» թատերական գեկուցումով: Լիլիթ Արսենյանի գեկուցումը նվիրված էր անվանի կոմպոզիտոր **Կոնստանտին Պետրոսյանի** «Մենախոսություն» վոկալ շարին, որի հիմքում Ռազմիկ Դավոյանի բանաստեղծություններն են: Արսենյանի՝ «Կոնստանտին Պետրոսյանի «Մենախոսու-

թյուն» վոկալ շարին. Ռազմիկ Դավոյանի բանաստեղծական ժառանգության մասնավորումը» խորագրով գեկուցման մեջ առաջին անգամ իննության են առնվել եւ համակողմանի ուսումնասիրվել վոկալ շարի գեղագիտական եւ կառուցվածային առանձնահատկությունները: Գիտաժողովը նշանակալի ֆայլ էր՝ ուղղված Ռազմիկ Դավոյանի գրական ժառանգության համակողմանիորեն ներկայացմանը, վերաբերմանն ու հանրահռչակմանը եւ մաս էր կազմում զրոյի 85-ամյակին նվիրված մի շար միջոցառումների՝ համերգներ, զբոսի հրապարակություններ, բանախոսություններ եւ շնորհանդեսներ: Ռազմիկ Դավոյանի 85-ամյակի միջոցառումների շարքում անփոփոխելի եղան, կոմպոզիտոր **Վահան Արծրունին** եւ իր երաժիշտ գործընկերները՝ ՀՀԸՄ Հայաստան գրասենյակի կողմից կազմակերպված «Երկխոսություն» խորագիրը կրող համերգով, որտեղ հնչեցին Վահան Արծրունու երգերը՝ զբված Ռազմիկ Դավոյանի բանաստեղծությունների հիման վրա:

Ճապոներեն հատոր Դիանա Աբգարի մասին

Տոկիոյի «Ֆուջիվարա շոուն» հրատարակչությունը լույս է ընծայել **Մեկնե Մետրոյանի** եւ **Արիսա Օսայի** «Ճապոնիայում ապրած «սփյուռքը»» Դիանա Աբգարի եւ Հայոց ցեղասպանությունը՝ ճապոներեն: Այն ճապոներեն առաջին աշխատությունն է ճապոնաբանական գործարար, հրապարակախոս, բարեգործ, ճապոնիայում Հայաստանի դատավար հյուրախոս **Դիանա Աբգարի** (1859-1937) մասին:

Ինչպես նշել է Մեկնե Մետրոյանն իր ֆեյսբուքյան գրառման մեջ. «2012 թվականին, երբ սկսեցի այս ուսումնասիրությունը, համարյա ոչ մի գիտական գրականություն գոյություն չուներ Դիանա Աբգարի կյանքի մասին ճապոնիայում: Գրեթե ընդհանրապես հոգվածներ չկային, եւ այդ ֆեյսբուքի մեջ **Արծի Բախչինյանի** աշխատանքն էր, որ դարձավ այն հիմքը, որի վրա սկսեցի կառուցել իմ սեփական հետազոտությունը: Բախսս բերել է նաեւ հանդիպելու ճապոնացի հետազոտող **Հիդեհարու Նակազինային**, որը լույս աշխարհ էր հանում հայոց ցեղասպանության մասին ճապոնացի գրականությանը: Նա



ճապոնիայում առաջիններից էր, որ գրեց նրա մասին: Նա շատ լավ բաժին հանեց իր նյութերը, դիտարկումներն ու հետազոտությունն այն ժամանակ, երբ ես նոր էի սկսել: Մեկ այլ կարեւոր օժանդակող էր **Հինջի Հիգեմացին**, որի «Աբգար & Co»-ի մասին ուսումնասիրություններն օգնեցին հասկանալու հայ առեւտրական ներկայությունը Յոկոհամայում եւ Աբգարների գործի մանրամասները»: Գրի առաջաբանը գրել է ճապոնիայում ՀՀ առաջին դեսպան **Հրանտ Պողոսյանը**, որին հետեւում են «Նախաբանը» եւ «Առաջաբանը» («Ա-

խարհի առաջին կին հյուրախոս» լինելու դատարանը): Աշխատությունը կազմված է հինգ գլխից եւ համադասարանական ենթագլուխներից՝ 1. «Հայ սփյուռքը» («Հայաստան» երեքազգայնացյալ դատարանը), «Դիանայի ծնունդից մինչեւ ամուսնությունը», 2. «Դեռի նոր աշխարհ՝ ճապոնիա» («Զաղափարված» Յոկոհամա», «Կանայք գործի են անցնում», «Ռուս-ճապոնական դատարանը եւ փոքր ազգի ուժը»), 3. «Չանգվածային կոտորածի մասին մարգարեությունն ու Աբգարի զոհաբերումները (1906-1914)» («Երկու անգամ ժողովրդավեր», «Մինչ ի մահ»): Նվի-

⇒ 4 2019 թվականի Բեռլինյան կինոփառատոնում կայացել է **Շեքսպիր Գեներեի** «Շեյն» վավերագրական ֆիլմի առաջնախաղը, որտեղ երգչի ուղիները՝ Թարեհ Շեյն Թաթեթն ու Իման Շեյն Թաթեթը, վերակերտել են իրենց հոր կերպարը խաղարկային դրվագներում: Ի դեպ, Թաթեթը Բեռլինում գործող կինոռեժիսոր, կինոօպերատոր եւ լուսանկարիչ է:

2021 թվականին ձեռնակահեր, սոփիսակ բեղմնավոր 76-ամյա Շեյնը վերջին անգամ հայտնվել է լայն հանրության առաջ Երկրորդ ձեռնամական հեռուստատեսությամբ (ԵԳՀ) «ԵԳՀ հիթ

երթի 50 տարի. հավելում» հաղորդման ժամանակ՝ կատարելով «Մամի Բլյուն»: 2022-ին Շեքսպիր Գեներեն հրատարակել է «Ազատություն 71. Ռիֆի Շեյնը, երաժշտությունը եւ հետազոտությունը» գիրքը, որտեղ երգչի գործունեությունը դիտարկվում է հետազոտության Բեռլինի վերածնունդի համատեքստում:

Չնայած Ռիֆի Շեյնը մի առիթով ա-

սել է՝ «Ես որեւէ ազգի չեմ դասկանում, ես դասկանում եմ Մայր Բնությանը», սակայն իր հարցազրույցներում երբեմն հիշատակել է իր հայկական ծագումը եւ մի անգամ խոստովանել է, որ (թող լույս աշխարհի չհնչի) իմը լույս աշխարհի չհնչի... Ըստ որդու՝ Թաթեթի մեզ հայտնած վկայությամբ, մոտ 35 տարի առաջ Ռիֆի Շեյնն այցելել է Հայաստան:

Կյանքի վերջին տարիներին Շեյնը երբեք չի խոսել իր հիվանդության մասին եւ ցանկացել է, որ իր մահը գաղտնի մնա, ուստի իր նախկին զուգընկերուհուն ասել է, որ իր հեռացումից հետո թող ասի, թե իբր իմը Կանադայում է: Չուղղակիորեն Շեյնի մահվան մասին հայտարարել է նրա մահից միայն ութ ամիս անց, այս տարվա հունիսին...

Ռիքի Շեյնը եւ իր «Օ Մամի» Հասարակական Պալատը

Ա. Բ.

ՀԱԿՈՐ ԶԱԶՐՅԱՆ

Կ. Պոլսո «Հայ թերթ» կայքում արձանագրված այս հոդվածը, որ ներկայացնում ենք ընթերցողի ուշադրությանը, հրապարակվել է անգլիական Independent-ի թուրքերեն տարբերակի նույննախնի 5-ի համարում, ուստի ել կարող է ժամանակավոր թվալ, սակայն՝ առաջին հայացքից միայն: Այն առումով, որ դրանում արժանատի խնդիրները, ինչպիսիք են դարաբանական հիմնահարցի կարգավորումն ու Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացումը, շարունակում են մնալ մեր հասարակության ուշադրության կենտրոնում, չեղիք չունի իշխանություն-ընդդիմություն բռնաբանություն: Հարկնակը Օսման Գազի Քանդեմիրն է: Ահա թե ինչ է գրել նա.

«Երեկվա համարում անդրադարձել էի Իսթանբուլի եւ սիոնիստական սփյուռքի տարածքային մասին, իսկ այսօր անդրադառնում եմ Հայաստանի եւ հայկական սփյուռքի միջեւ առաջացած տարաձայնություններին: Այդ տարաձայնությունները չափազանց կարեւոր են ժամանակակից արեւելքի իրավիճակի համար:

Հայաստանի վարչապետ **Նիկոլ Փաշինյանի** 2018-ին իրականացրած «թափառող հեղափոխությունից» հետքեր կրող իշխանության գալը սփյուռքահայերի շրջանում մեծ ոգեւորություն էր առաջացրել: Սակայն 9 տարի անց 3 մլն Հայաստանի եւ 8-10 միլիոնանոց աշխարհասփյուռք հայության հարաբերությունները թեւակոխեցին ժամանակակից իշխանության մեջ թերեւս ամենալարված ժամանակաշրջանի:

Այդ լարվածության հիմքում ընկած է հայկական ինքնության նկատմամբ երկու՝ իրարմեծ մոտեցումների բախումը: Փաշինյանի ժողովրդավարական ղեկավարության նկատմամբ լարվածությունը սփյուռքի մասնական հիշողության վրա հենվող թուրքական հոգեբանական հոգեբանական իշխանության հակադրության արդյունքն է: Դա չէր լինի նաեւ, եթե այդ օրերի

Տարաձայնություններ Հայաստանի եւ հայկական սփյուռքի միջեւ



Պարապալ. բեկումնային կետ

2020 թ. 44-օրյա պատերազմը վառեց հակամարտության պայթյունը:

Պատերազմի առաջին իսկ օրից իր ուժերը մեքիլիզացրեց սփյուռքը: Փաշինյանի էլիտայի աշխարհի մոտ հավաքվեց 20 հազար մարդ: Լուս Անգլիայում կազմակերպվեց 100 հազարանոց ցույց, Լիբանանից եւ Սիրիայից ռազմաճակատ մեկնեցին բազմաթիվ հայ կամավորականներ:

Սակայն, երբ 2020 թ. նոյեմբերի 9-ին ստորագրվեց զինադադարի համաձայնագիր, դրանով հայերը կորցրեցին Լեռնային Ղարաբաղի գերակշռող մասը, ինչը մեծ ցնցում առաջացրեց սփյուռքում:

ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի Հայ հեղափոխական դաշնակցության ժողովները սկսեցին «ամենասուր լինելու» մեջ մեղադրել Փաշինյանին:

Արեւմտյան ԱՄՆ-ի ՀՀ ժողովները իրենց մամուլում «Թուրքիայի եւ Ադրբեջանի ծրագրերին ծառայելու» մեջ մեղադրեցին վարչապետին:

Լուս Անգլիայում, Բեյրութում եւ Փարիզում հազարավոր սփյուռքահայեր Փաշինյանի հրաժարականի դեմ հանդիմանալով դուրս եկան փողոց եւ Հայաստանի հյուպատոսարանների առջեւ հայտարարեցին, որ չեն ճանաչում կառավարությանը:

Պարապալ: Այդ ընթացքում Ռուսաստանի հայերի միության նախագահ **Արա Աբրահամյանը** 2023-ի մայիսին գրած բաց նամակում նշեց, որ Փաշինյանը «Արցախի հետ նաեւ Հայաստանն ու սփյուռքն է հանձնել»:

Ինչ վերաբերում է «Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը ճանաչելու» Փաշինյանի հայտարարություններին, ապա դրանք կրկին բորբոքվեցին սփյուռքում:

Թուրքիայի հետ նորմալացում. կարմիր գծի հասումը

Փաշինյանի՝ Թուրքիայի հետ հարաբերությունների նորմալացմանն ուղղված փորձերը դառնալով դարձան սփյուռքի խոչընդոտներ երկրորդ հակադրությանը:

2022-ից սկսած կազմակերպվեցին հանդիպումներ, իսկ 2023-ին Փաշինյանը ժամանեց Անկարա՝ մասնակցելու **Էրդողանի** երդմնակալության արարողությանը:

Սփյուռքի համար, ինչպես երևում է, Թուրքիայի հետ հարաբերություններն ուղղակի 1915-ի ցեղասպանության ուրացման եւ ժամանակակից իրավունքներից հրաժարվելու խնդիր է: Հետեւաբար առանց նախադրյալների նորմալացում

ցումն այնքան զնախադրվեց «անսկզբունքային զիջում»:

Ամերիկայի հայ ազգային կոմիտեն եւ ՀՀ-ն բացահայտեցին դեմ դուրս եկան նորմալացման գործընթացին: Ավելին, ՀՀ-ի կառույցները գործընթացը բնութագրեցին «Փաշինյանի ծրագիր» կամ «Հայաստանի թուրքացման նախագիծ»: Սփյուռքի առաջնորդները մտադրված են, որ նորմալացման դեմքում թուրքական ցեղասպանությունը կույ կսա Հայաստանը, թուրքերն ու ադրբեջանցիները հողատիրացիներ կգնեն, հայկական կողմը կհրաժարվի Ցեղասպանության եւ փոխհատուցման դաշնագրերից եւ երկիրը խեղճամահ կլինի Չանգեզուրի միջանցով:

Ֆրանսիայի հայկական միությունները հայտարարեցին, որ ֆանի դեմ Թուրքիան որեւէ նախադրյալ չի կատարել, ավելորդ է խոսել հարաբերությունների նորմալացման մասին:

Լիմանանում դաշնակցական «Ազդակ» թերթը Թուրքիայի հետ նորմալացումը համարեց դավաճանություն Ցեղասպանության դրոշմին:

2023-ին Փաշինյանի այցի ընթացքում Աստիքյան արած հայտարարությունը, թե ինքը չի կարող ստանձնել աշխարհի բոլոր հայերի դաշնակցականությունը, սփյուռքում օտարվելու տրամադրություն գործեց: Թերեւս ամենախոշոր ձգնաժամն առաջացավ 2025-ին Ցյուրիխում, որտեղ հանդիպմանը Փաշինյանը սփյուռքի ներկայացուցիչներին ասաց. «Պե՛տք է վերագնահատել, թե ինչ եւ ինչու է սեղի ունեցել 1915-ին»: Նա դրանով մեծաթեւ վիրավորել էր սփյուռքին:

Փաշինյանը իշխանության սկզբնական փուլում սփյուռքի փառաբանական ազդեցությունը Հայաստանում վերացնելու համար գործնական փորձեր էլ ձեռնարկեց, առաջարկելով երկրում լուծարել սփյուռքի նախարարությունը:

Ընդդեմ ժամանակակից խեղճություններ

«Ազգ»-ի նախանցյալ համարում խոստացել էինք անդրադառնալ օրերս լույս տեսած, ավելի ճիշտ՝ վերահրապարակված կարեւոր մի ժողովածուի, որը կրում է «**Զ. Բունիատովի գրական-դասական հայեցակարգը**» վերնագիրը եւ որի հեղինակը ակադեմիկոս **Կարապետ Մելիք-Օհանջյանն** (1893-1970) է, որն այն հրատարակել է ռուսերեն լեզվով, «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի 1968 թ.ի 2-րդ համարում, «Историко-литературная концепция З. Бунятова» վերնագրով, որդես ժամանակակից եւ հերթում ադրբեջանցի ժամանակակից Զիյա Բունիատովի՝ «Ադրբեջանը VII-IX դարերում» 1965 թ.ի Բաքվում լույս տեսած ռուսերեն մենագրության մեջ առկա՝ Հայոց եւ Աղվանից ժամանակակից եւ մշակութային ժառանգության խեղճությունն արձանագրելով փաստը:

Հասկանալի է, որ նման ծավալուն հոդված 60-ականների կեսերին Խ. Հայաստանի կարեւորագույն այդ հանդեսում չէր կարող լույս տեսնել, եթե Հայաստանի Կոմկուսի կենտրոնը չարժեքներ, ավելին՝ չհանձնարարեր նրան հանդես գալ ընթերցանիչ ժամանակակից: Դա չէր լինի նաեւ, եթե այդ օրերի


մեր ժամանակներն ու գրողները, ի տարբերություն ներկայի սիստեմային մեր ժամանակների եւ խիստ հազվադեպ մասնավորականների, չդաժնալեցին հերթել ու ջախջախել Բունիատովի ու նրա մեջքին կանգնած ադրբեջանական կոմկուսի եւ ազգային ռասիստ վերնախավի հակահայ թեզերը: Հասկանալի է, որ ժամանակակից առաջամարտիկներից է եղել հայ ժողովրդի մեծերից **Պարույր Սեւակը**, որ, ըստ նրա մոտիկ ընկեր մեր թերթի բարեկամներից **Երվանդ Տեր-Խաչատրյանի**, գրել է 64 էջանոց հակաժառանգություն Բունիատովին, սակայն ժամանակի ամենակարող գրախոսությունն ընդամենը 17 էջ է թողել մամուլի համար, ժամանակակիցները Պարույրի այդ ժամանակի դեմք... գիտական կոչում չունենալով:

Նույն վիճակն է այսօր. Իլիամի հակահայ ռասիզմը նորից հիմնված է բունիատովյան հայեցակարգի վրա՝ ծավալապաշտական նոր հավակնություններով ուռճացված: Հետեւաբար ճիշտ ժամանակն էր վերահրապարակելու 39 տարի առաջ մեր առաջադեմ մասնավորականության եւ ժամանակակից մեքիլիզացիայի արժեքները, կեցվածքները, հայրենադաշնությունը:

Եվ ճիշտ են վարվել վերահրապարակված աշխատության կազմողը՝ **Վահան Մելիք-Օհանջյանը**, խմբագիր **Ալեքսան Զակոբյանը** ժողովածուն հրատարակելով 5 լեզվով՝ հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն եւ գերմաներեն լեզուներով, թարգմանիչներ **Անահիտ Զարուբյանի, Անահիտ Զարիյանի, Արուսյակ Իսրայելյանի, Էլզա Գեորգյանի** մասնակցությամբ, վաղամեռիկ ժամանակակից **Վարդան Դեմիրկյանի** աջակցությամբ, որը գրել է Կ. Մելիք-Օհանջյանին նվիրված «Հայագիտության ամիսնոց երախտավոր» առաջաբանը, մինչեւ ժող. Ա. Զակոբյանը գրել է «Ալեքսան-Աղվանի հետազոտության արդի խնդիրները եւ «բունիատովյան» հոդված-խմբագրականը:

Մեկ խոսքով՝ վերահրապարակություն՝ որը հարստացված-ամրապնդված է նորությամբ, անհրաժեշտությունների համալրականով, մանավանդ՝ ժամանակակից գործող իշխանության, մեղմ բառով՝ չկամության ժամանակների ներքին ստեղծված:


Փաստորեն, Ալիևների ծավալապաշտությամբ, հակահայ, հակամարդկային ու հակադաշնակցական փառաբանական



ությունը դեմ ժամանակակից հասարակությանը, 5 լեզուներով, որը կարող է, ինչպես է հիմնականում աշխարհի, մեր որոշ ժամանակակից հանձնվողականության դեմ ժամանակակից ժամանակակից կոչվածների:

Լուսանկարներով, փառաբանությամբ, լավ կազմով, 278+ էջ ծավալով հասորը տրամադրվել է «Էդիտ Դիմի» տրամադրությամբ, 2025 թ.ին:

**Իմաստաբանական
բառարան**
*Դժվար է, բայց ոչ
անհնարին*



Փորձենք մեր վառ երեակա-
յության օգնությամբ լուսավե-
րացնել, որ մեզանում արմա-
սախիլ է արվելու իմաստը: Ա-
վելին՝ օրենքով փրեկանաց-
վելու են կեղծավորությունն ու
երեսպագությունը, երկերե-
սանությունն ու ստորաբու-
թյունը: Արգելափակում կորվի
հայերենի բառադարանի մեջ
արմասացած, հասկալի
նուսերեն «Շողիկ» բառի
վրա: Շողիկներին բացա-
հայտող ուսկանները խա-
խուսվելու են կլորիկ տարգե-
լավճարներով:

Եկեք մի լուսավերաց-
նենք, որ փառքի բանուկ
հասկանալի են ճշգրտվելու
են տարբեր չափի սյուներ (ա-
նարգանքի սյուներ)՝ իրենց
ժողովրդի հետ սեփի անող են-
թականերին զանազան համար:
Կարող եմ լուսավերացնել
ժողովրդի անհետք խոսքերի
սակ ստորագրելուց հրաժար-
վող խոսքի չինովնիկի դեմ-
քը: Իրոք՝ դժվար է:

Մի փչ ղժվար է լուսավե-
րացնել, բայց փորձենք մեր
մեջ ուժ գտնել ու մտքի վե-
րաբարել ժողովրդի մեծարելու
խնդրիկի ճշմարտությունը, որտեղ
ենթական կենաց ասելու
փոխարեն՝ «ծխելու» ան-
վան ճակ դուրս է գալիս
դաժնիքի եւ միտմանավոր
կորցնում վերադասին մի եր-
կու փառք խոսք ասելու բա-
ցառիկ առիթը:

Փորձենք մաքուր լուսավերաց-
նել աշխատանքողվների ժա-
նանակ «ժնանքն արձանագ-
րող դեպքերի» արձակած
խլացնող ազդանշաններից
ժողովրդի չինովնիկների
դեմքերը:

Կարող եմ լուսավերացնել
նախընտրական ժողովներում
թեկնածուների կողմից ժո-
ղովրդին ճշմարտություն
մեջ ծնանքի տարբեր հայտնա-
բերելու գործը «Իրազեկ փա-
ռաբանների միավորում»
կազմակերպության համա-
կարգողին վստահելու արդյու-
նավետությունը: Դժվար է,
բայց ոչ անհնարին:

Չե՞տե՞ք, բայց եկեք փորձենք
լուսավերացնել մաքուր նորաձե-
մեթոդներով կրթվելու համար
կազմակերպվող դասախո-
սությունների կիսադասարկ
լսարանները՝ մեկը մյուսին
հերթ չհալվող լսարանը լիով
ունկնդիրների ծանձնությամբ
են ծափահարելուց հրաժարվելու
նրանց համարձակությունը:
Դժվար է, բայց ոչ անհնարին:
ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

**Ալ-Մայադին. ԱՄՆ-ը ձգտում է ստեղծել նոր միջանց-
դեղի Ասիա՝ Երջանցելով Ռուսաստանը**
*Լիբանանյան հեղինակավոր հրատարակության նոյեմբերի 15-ի
այս հոդվածը հասկանալիորեն ներկայացնում ենք ռուսական
«ԻնտՄԻ»-ից թարգմանությամբ*

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՄՆ-ի եւ այլ երկրների հետ Ադրբեյջանի
կողմից ստորագրված նոր էներգետիկ հա-
մաձայնագրերը նվազեցնում են նրա
կախվածությունը ռուսական գազից՝
թուլացնելով Մոսկվայի ազդեցությունն
ու ամրապնդելով Անկարայի դիրքերը:

2025 թվականի օգոստոսին ԱՄՆ-ի
միջնորդությամբ կնքված խաղաղության
համաձայնագիրը հաստատեց այսօր
կոչված «Թրամփի երթուղին միջազ-
գային խաղաղության եւ բարգավաճման
համար» (TRIPP): Այս համաձայնագրով
մասնավոր ամերիկյան ընկերությանը ի-
րավունք է տրվել զարգացնելու այն երթու-
ղին, որը նախկինում հայտնի էր որպես
Ջանգեզուրի միջանց:

Ադրբեյջանի համար սա կբացի ուղի
ցամաքային երթուղի Զայասանի Սյունի-
փի մարզով դեղի Նախիջևանի Իմմա-
վար Զանաթեթություն եւ դեղի Թուր-
քիա՝ նվազեցնելով նրա կախվածու-
թյունը իրանական եւ ռուսական տարա-
նություններից:

Ադրբեյջանը ձգտում է օգտագործել նոր
միջանցը՝ ամրապնդելու իր դիրքերը ու-
րա Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի
եւ այլ տարածաշրջանների միջեւ աղ-
րամբների ու էներգետիկ տարանջման
հիմնական հանգույց: Սա երկրին թույլ
կտա մեծացնել իր տնտեսական եւ աշ-
խարհափառական կարեւորությունը:
Այս ծրագրերը համընկնում են Բաքվի նա-
վահանգիստ ընդլայնելու եւ երթուղին
Կենտրոնական միջանց անունով
հայտնի ավելի մեծ տրանսպորտային ցան-
ցի մեջ ինտեգրելու մտադրություններին:

ԱՄՆ-ի միջնորդությամբ կնքված հա-
մաձայնագիրը գնահատվում է որպես
Վաշինգտոնի հետ ռազմավարական գոր-
ծընկերությունն ամրապնդելու հնարավոր-
ություն: Դա կարող է վերաբերել տարբեր
ուղիների, այդ թվում՝ էներգետիկ անվ-
տանգությանը, տառապանական համա-
գործակցությանը եւ, հնարավոր է, ԱՄՆ
օգնության երկարատեւ սահմանափա-
կումների վերացմանը (Ազատության ա-
ջակցության ակտի 907-րդ բանաձեւ):

Այն մաքուր մոտաանկողված է Թուր-
քիայի ու Զայասանի միջեւ հարաբերու-
թյունների նորմալացմանը, ինչը կօգնի
թուլացնել սահմանին լարվածությունը եւ
բարելավել տարածաշրջանային համա-
գործակցությունը: ԱՄՆ-ին որպես միջ-
նորդ ներգրավվելու եւ Արեւմուտքում մեկ-
նային կողմից վերահսկվող տրանսպոր-



ված տարանցիկ ուղի ստեղծելով՝ Ադրբե-
յանը ձգտում է թուլացնել Ռուսաստանի
եւ Իրանի ազդեցությունը Զարավային
Կովկասում: Նրա ձգտումը կիսում է մաքուր
ԱՄՆ-ի վարչակազմը:

Ադրբեյջանի նախագահ **Իլհամ Ալիևը**
մտադրվել է ստեղծել անվտանգ եւ մի-
ջազգայնորեն ճանաչված տարանցիկ ու-
ղի, որն իր երկիրը կկառուի Թուրքիայի հետ:
Նա ձգտում է Ադրբեյջանը դիրքավորել ու-
րա Զարավային Կովկասի տարածաշր-
ջանում կարեւոր առեւտրային կենտրոն:
Սրան զուգահեռ՝ նա ամրապնդում է կա-
րեւոր արեւմտյան գործընկերների հետ:
Արդյո՞ք Ալիևը ուկրաինական հակամար-
տությամբ Ռուսաստանի զբաղվածու-
թյունն է օգտագործում իր օգտին: Թե՞ սա
Երդողանի՝ Կենտրոնական Ասիա մուտք
գործելու լուսանի մի մասն է: Կամ Ռու-
սաստանին Կովկասից ժողովրդավար Ա-
րեւմուտքի փորձն է:

Ադրբեյջանը դարձել է Եվրոպայի կա-
րեւորագույն էներգետիկ գործընկեր, որը
ձգտում է նվազեցնել իր կախվածությունը
ռուսական գազից: Սա կարող է կառու-
ված լինել նոր «երթուղիների» կամ մի-
ջանցների ստեղծման հետ: Միացյալ Նա-
վահանգները տարածաշրջանը դիտարկում
են որպես նոր «եվրասիական ուղի» հիմնա-
կան օղակ:

**Թուրքիայի դիրքերի
ամրապնդումը**

Ադրբեյջանը ձգտում է ամրապնդել իր
դիրքերը որպես լոգիստիկ հանգույցի, դի-
վերսիֆիկացնել էներգետիկ աղբյուրները
եւ մեծացնել իր ազդեցությունը Ռուսաս-
տանի վրա: Այս ամենն ամրապնդվում է
ԱՄՆ-ի եւ Թուրքիայի միջեւ սերտ հարա-
բերություններով: Բայց նման համագոր-
ծակցությունը մարտահրավեր է նետում
Ռուսաստանի ազդեցությանը նրա սե-
փական «հենաքաղաքում»:

Այն երթուղին, որը կառույն է Զայասա-
նը եւ Ադրբեյջանը, զգալիորեն ամրապն-
դում է Եվրասիայում Թուրքիայի տնտեսա-
կան ու աշխարհափառական դիրքը: Այն
աղաքավորում է անկախություն Ռուսաս-
տանի կողմից վերահսկվող տրանսպոր-

տային ուղիներից, ինչը սակայն առա-
ջացնում է վերջինիս դիմադրությունը:

TRIPP նոր առեւտրային միջանցն ա-
ղաքավորում է այլընտրանքային կառու-
րեւելի եւ Արեւմուտքի միջեւ՝ ժողովրդավա-
րական երթուղիները: Թուրքիան
այս տարածությունը դառնում է կարեւոր լո-
գիստիկ կենտրոն, որը կառույն է Զինաս-
տանը Եվրոպայի հետ: Միջանցը խոստա-
նում է զգալի տնտեսական օգուտներ՝
հաշվի առնելով Թուրքիայի բարենպաստ
դիրքը Եվրոպայի եւ Ասիայի սահմանագ-
ծին: Սա մոտաանում է էներգետիկ նոր հա-
մաձայնագրերի կնքմանը ԱՄՆ-ի եւ այլ
երկրների հետ, որոնք ձգտում են նվազեց-
նել իրենց կախվածությունը ռուսական
գազից: Այդ կերպ թուլանում է Մոսկվայի
ազդեցությունը եւ ամրապնդվում Անկա-
րայի դիրքերը:

ԱՄՆ-ի ու Թուրքիայի միջեւ նախագահ
Թրամփի օրոք ձեւավորված սերտ դա-
շինքն ամրապնդում է նրա (Թուրքիայի -
Գ. Մ.) ռազմավարական դիրքերը Զարա-
վային Կովկասում, Սիրիայում եւ Լի-
բիայում: Մոսկվան փնտառաքար է վե-
րաբերվում իրադարձությունների նման
զարգացմանը, քանի որ դա կարող է հան-
գեցնել լարվածության սրման, չնայած
Թուրքիան ձգտում է հնարավորության
դեղքում խուսափել ԱՄՆ-ի եւ Ռուսաս-
տանի միջեւ՝ որտեղ դա հնարավոր է:



Թրամփի քիզնես-մոտեցումը մոտա-
սում է Թուրքիայի հետ ուղիղ համագոր-
ծակցությանն ու հիմնական հարցերի
ժողովրդավարական համաձայնեցմա-
նը, ինչն օգուտ է բերում երկու կողմերին էլ
եւ ամրապնդում է երկկողմ հարաբերու-
թյունները:

Այդ նույն ժամանակ ՌԴ նախագահ
Վլադիմիր Պուտինը փորձում է աղա-
քանել վերահսկողությունը Զարավային
Կովկասում՝ միաժամանակ հակամար-
տության մեջ մտնելով Թուրքիայի ու Ադր-
բեյջանի հետ: Բացի այդ, նա ձգտում է ա-
վելի խոր ինտեգրման Կենտրոնական Ա-
սիայում եւ, հնարավոր է, փնտառում է նոր
գործընկերներ Մերձավոր Արեւելում: Այս
ամենը ճեղքի է ունենում Ուկրաինայի ի-
րավիճակի հետ կառույն սահմանափա-
կումների եւ ներքին խնդիրների ֆոնին:

Ռուսաստանի համար դժվար կլինի
խուսափել Կովկասում ուժի բեւեռների
ձեւավորումից: Սա կարող է սրել Եվրա-
սիայում ազդեցության համար մրցակ-
ցությունը Թուրքիայի, Եվրամիության եւ
Արեւմուտքի հետ:

**Ռուսերենից թարգմանեց՝
ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆԸ**

Աշխակ գյուղի «հանրագիտարանը»



Վրեժ Սա-
րուխանյանի
«Ա Շ Խ Կ»
գրքի շնոր-
հանդեսն է:
Այն հարուս
եւ հետաքր-
քալի ու
դասնություն
ունի
բնական
վայրի ծավալում
տարեգրությունն է:

Մեղվի լուսն նա տուն առ տուն, գերդաս-
տան առ գերդաստան, ճակատագիր առ
ճակատագիր փառել է լուսնությունը մի
բնակավայրի, որ թեւեւ հին, ժամանակին
ծա-
գում ունի, սակայն իր կյանքի նոր ժողովրդ

սկսել է Զայոց մեծ եղեռնից մազադուրծ
սասունքներով բնակեցվելուց հետո:

Վրեժ Սարուխանյանն իր արձակով Սա-
սունը ստիպմամբ լրած, տարագիր սասուն-
քների ճակատագրերի տարեգրում է, էզրի
մասին կենդանի հուշերն ու լուսնունները
գեղարվեստորեն արձանագրողը, Սասունը
սեսած մարդկանց եւ նրանց՝ իրենց սե-
րունդներին հաղորդած կարոտի կողով, որ
գրական բազում արձակ, մաքուր չափածո է-
ջերի է վերածել՝ բարբառի ճեղքն ու հա-
մով-հոսով գործածմամբ, հայոց ավան-
դույթների եւ միտման, բարոյական
կերտվածքի, հերոսականության, դիմա-
կայման ուժի, վերադարձի, վերածնունդվե-
լու կամքի հղիվումներով:

«Առօրյա զրոյսում յուրա-
բանչոր երեխայի յուրա-
հանգիստը բացահայտե-
լու համար անհրաժեշտ է սիրո,
համբերության եւ իրազեկու-
թյան ուժը: Մեր նպատակը ոչ
միայն բուժելն է, այլ նաեւ ե-
րեխայի ներքին լույսը բացա-
հայտելը»:
ՄԵՐԻ ՏԱՇՅԱՆԻ
Տոգեբան

Առօրյա զրոյսում երեխաներին հոգեբանական աջակցության ճանապարհով



Church» դրոշմով մա ներդրել է իր հե-
ղինակային մեթոդաբանությունը՝
«Ինտեգրված արտահայտչական մո-
դել» («Integrated Expressive Model»),
որը համադրում է հեփաթաթերաթիա-
յի, արթերաթիայի եւ վարային մե-
թոդների սարրերը: Աշխատում է «Atlas
ABA» կենտրոնի հետ՝ առօրյա երե-
խաների զարգացման եւ ինտեգրման ո-
լորսում: Մերի Տաշյանը նաեւ «Amer-
ican Psychological Association»
(APA)-ի անդամ է եւ շարունակաբար
ներգրավված է համայնային մախա-
ծեռնություններում՝ աջակցելով երե-
խաներին կամավոր հիմունքներով:

Մերի Տաշյանը ղարգեւատրվել է
բազմաթիվ շնորհակալագրերով եւ
ղատվոգրերով:

- Ի՞նչ է առօրյան: Ինչո՞ւն այն
ախտորոշել եւ բուժման ի՞նչ միջոց-
ներ կան:

- Առօրյանը ընդամուր զարգացման
խանգարում է եւ ենթադրում է հիմնա-
կանում երեխ խոշոր ոլորտների խանգա-
րում՝ հաղորդակցման, սոցիալական
փոխհարաբերությունների, կարծաշի-
ղային միօրինակ վարագծի: Պետք է
նշել, որ առօրյանը բնածին է եւ ունի
ղատասխանատու գեներ, բայց մենք
դա հասակ սկսում ենք նկատել 1,5 տա-
րեկանից: Երբ ծնողը տեսնում է, որ երե-
խան աչքերի մեջ չի մայում, շատ ժա-
մանակ չի արձագանքում իր անվանը
կամ տեղ-տեղ է արձագանքում, դժվար է

սնվում, գերզգայում է ձայների նկատ-
մամբ, աղա ուրան հնարավոր է շուտ
ղետք է դիմի մատնագետների: Ուրան
շուտ են սկսում վերականգնողական
գործընթացը, այնքան լավ դիմանիկա
է արձանագրվում:

- Ինչո՞ւն աջակցել առօրյա
աղեկորի խանգարումներ ունեցող
երեխաներին:

- Աշխարհի տարբեր երկրներում կան
տարբեր մոտեցումներ առօրյա
աղեկորի խանգարումներ ունեցող ե-
րեխաներին աջակցելու համար: Հա-
յատատում մեծ ջանքեր օգտագործվեց,
որ առաջնային բուժօղակի բժիշկներն
ու մանկավարժները վերաղատատ-
վեն եւ ճանաչեն, իմանան առօրյա
եղությունը: Իհարկե, դրա մեջ իրենց մեծ
դերն ունեն մաեւ լրատվամիջոցները:
Եւ եթե մախկնում ծնողներն ալելի
ուշ էին դիմում գնահատման համար,
աղա այդ տեղեկատվական ֆարոցից
հետո, ախատմիշները նկատելում ղետ,
դիմում են մատնագետներին:

- Որո՞ւն մատնագետ հանրակրթու-
թյան ոլորտում բազմամատնագի-
տական թիմի կազմում աշխատա-
նային փորձից ելնելով ի՞նչ եւ կար-
ծում համընդհանուր ներաղակա-
նությունն առօրյա շաղաղող ե-
րեխաների լավագույն աղիք սղա-
տարկում է, թե՞ ոչ:

- Համընդհանուր ներաղական կրթու-
թյունը եւա նղատում է երեխաների
ճիշտ ինտեգրմանը: Սակայն չես համե-
մաշի այն աջակցությունը, որը երե-
խաները ստանում են Ամերիկայի Միա-
ցյալ Նահանգներում: ԱՄՆ-ում, երբ ե-
րեխային ախտորոշում են առօրյա,
արդեն իսկ աջակցության ժամեր են
տրամադրում՝ 30-40 ժամ շաբաթա-
կան, եւ մատնագետների խումբը երե-
խային այդ ժամերի աջակցությանը
տրամադրվում է կամ ABA (Applied
Behavioral Analysis (Կիրաղական
վարագծի վերլուծություն)) կենտրոն-
ներում կամ՝ ծնողի ցանկությանը, ե-
րեխայի տանը: Այս հսկայական աշ-
խատանքը ֆինանսավորվում է ղետու-
թյան կողմից: Հայատատում, ցավոք,
այս ղաիին անհատանելի է այս ան-
չափ կարեւոր օգնությունը:

- Ի՞նչ մեթոդներ եւ կիրաղում աշ-

խատանում:

- Կան հատակ մեթոդներ առօրյա
աղեկորի խանգարումներ ունեցող ե-
րեխաների հետ աշխատանքում: Առա-
ջին հերթին համբերատարություն եւ
սղատելու ունակություն ձեւավորելն է:
Մենք դիտարկում ենք, թե ինչ է ունակ ե-
րեխան անել եւ ինչքան կարող է սղա-
տել: Մենք աշխատում ենք Tolerance
Training-ի մեթոդով, որը սովորեցնում
է սղատել ղարգեւների համար: ABA -ի
աշխատանքը կազմվում է հետեւյալ
կերթ՝ ամբողջ ընթացքում երեխայի
հետ աշխատում ենք խոսքի զարգաց-
ման, հաղորդակցական ունակու-
թյունների զարգացման, կենցաղային
հմտությունների, հատակակցների հետ
շփման ունակության զարգացման
վրա եւ այդ ամենը նրանք անում են աշ-
ղակա աշխարհն ուսումնասիրելով եւ
ամեն նղատակ փոքր աղանձին մատե-
րի բաժանելով:

- Իսկ ի՞նչ կատեք երաժշտաթերա-
թիայի աղեցության մատին:

- Երաժշտությունը հղոր մեթոդ է առ-
օրյա սղեկորի խանգարումներ ու-
նեցող երեխաների աշխատանքի կազ-
մակերթման համար: Այն ընդարձա-
կում է երեխայի մտահորիզոնը, ալկի-
վացնում է ընկալումը: Պետք է երեխա-
յի համար ստեղծել ղայմաններ երաժ-
տական զարգացման համար՝ խաղերի
միջոցով, երգելու, զբոսանքի ժամա-
նակ: Իհարկե, երաժշտությունն էլ ղետք
է ընտրված լինի երեխայի մտավոր կա-
րողությունները հաշվի առնելով: Օրի-
նակ՝ եթե մենք երաժշտության միջո-
ցով երեխային սովորեցնում ենք «Երեք
խոգուկներ» հեփաթը, աղա երեխան
հատակ ղատկերացնում է՝ թե որ նոտա-
ների ժամանակ է գալիս գայլը: Ռիթմն
ալկիվացնող մի աւրք երաժշտական
առաղադրանքներ մեծ հետաքրքրություն
են առաղացնում եւ նղատում առ-
օրյա սղեկորի խանգարումներ ու-
նեցող երեխաների զարգացմանը:

- Ի՞նչ խորհուրդ կտաք այն ծնողներ-
ին, որոնք ունեն այդդիսի խնդրով
երեխաներ:

- Ուրան վաղ լինի ախտորոշումը,
այնքան բարձր կլինի աշխատանքի ար-
ղյունավետությունը:

ԱՐՄԻՆԵ ԱՅՈՅԵԱՆ

Աշխատողի «հանրագիտարանը»

⇒ 7 Նրա արձակում կեր-
ղարներն իրական-կեն-
դանի են, գեղարվեստական
հնարանքը երեք հնարովի չէ,
այլ զուտ գրողական լեզվի յու-
րաշիղ արտահայտություններով
կուռ կառուցված: 20-րդ դարի
առաջին, մինչ օրս անամոք
ցավ ղատճաղող ողբերգական
իրաղարձությունների՝ մաի-
վան, մախճիրի, հայրենագրկու-
թյան ցավը, սակայն, հուատ-
հատեցնող տոնայնությամբ չի
նկարագրում, նրա հերոսները՝
կին թե տղամարդ, չկոտրվող,
սատունցու ծուռ կողով, սատունցու ա-
րյան հիշողությամբ օժտված անհատ-
ներ են: Եվ այդ գրականությունը
ստեղծողը, հենց, ղետք է լինեք այն
հավաքողը, որին վատակեց Աշխա-
կի՝ հանրագիտարանային մատնակու-
թյուն ունեցող եւ բովանդակությամբ՝



հարուստ գիրք գրելու գործը: Մի ֆանի
տարվա ջանաղիր աշխատանքի ար-
ղյունքը եղավ «Աշխատ»-ը, որը օրերս
Ավ. Իսահակյանի անվ. գրաղարա-
նում հանդիսությամբ ներկայացվեց
հանրությանը: Դաիլիճում էին աշ-
խակցիներ, գրողներ, գրականագետ-
ներ, երգիչներ, հեղինակի գրչընկերներ:

րը: Եղան գրականագիտական
դիտարկումներ, հիմնավոր գնա-
հատականներ, մանրաղատում-
ներ՝ սատունցիների նիսուկա-
ցից, ասումնք եւ երգեցողու-
թյուն՝ սկսյալ տոմասից մինչեւ
ժողովրդական, աշուղ-գուատ-
նական երգեր:

Այդ գրում մի էջ էլ նկիրված է
ին մորենական ղաղին՝ Սատու-
նից տակավին մանուկ հատա-
կում փախեփախ եղած եւ 1930-
ականների վերջերին Աշխակի
ղղրոցի տնօրեն, տղի հանրա-
ճանաչ ղարի անատմբլի առաղ-
նաղարող Հակոբ Հովհաննիսյանի
կյանքին եւ գործին: 275-րդ էջին նրա
երկու լուատնկարներն են եւ համաղոտ
կենատագրությունը:

Հղատք են մախնիներովս, շնորհա-
կալ են գրի հեղինակին:

ՀԱՄԻՆԻ ՍԱՐԳՍԵԱՆ

«ԱԶԳ» ՀԱՐԱԹԱԹԵՐԹ
Հրատարկություն L7 տարի
Հրատարկիչ
«ԱՎՅԱՆ ԹԵԶԵՅԱՆ»
սոցիալ-մտակութային հիմնաղրամ
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա,
Տարածք 48, Երեւան 0001
e-mail: info@azg.am
azgdaily@gmail.com
www.azg.am
Գլխատր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԻԵՏԻԶԵԱՆ
Հաշվաղաիտութիւն (գովաղդ)
հեռ. 010 582960
Համակաղգչային տարուածքը՝
«Աղգ» թերթի
Թերթի նիթերի ամբողջական թե մատնակի
արատտումները տղագիր մամուլի միջոցով,
ռաղիոհեռուատտեութեամբ կամ համացան-
ցով, առանց խմբագրութեան գրատր համա-
ձայնութեան խոսքի արգելում են համաձայն
ՀՀ հեղինակային իրատնքի մատին օրենքի:
Նիթերը չեն գրախոսում ու չեն վերաղարձ-
ում:
“AZG” Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960